«ՁԵՌԱՑ»

Արգո պարոններ, հայրեր սրբազան,
Վաղուց ենք կռվել ես ու իմ մուսան,
Նրանից հետո էլ չեմ կարող ես
Սահուն ու ձեռաց հորինել էնպես։

Արգո պարոններ, հայրեր սրբազան,
Վաղուց ենք ջոկվել ես ու իմ մուսան,
Ես եկա դեպի աղմուկներն անվերջ,
Քեֆեր ու ճառեր, ժողովներ ու վեճ,
Դարձա թամադա ու քաղաքագետ...
Իսկ նա ինձանից հեռացավ անհետ...
Ասում են, իբրև, թափառում է նա
Բյուրակնյան ծաղկոտ սարերի վրա.
Ու չի մոռացել, դեռ հիշում է ինձ,
Տանջվում է, մաշվում սիրուց, կարոտից։

Բայց ճամփաները շատ են արյունոտ,
Չի կարողանում ետ դառնա ինձ մոտ։
Երբ ճամփաները դիակների տեղ
Բուրյան ծաղիկներ կփռեն շքեղ,
Երբ էլ գաղթական չի լինիլ քաղցած
Երբ խոսք ու ժողով կըլինեն բաց-բաց,
Ողջի հետ հայն էլ կապրի ինքնորեն
Ու կպահանջի, որ երգեր գրեն,–
Նա ետ կդառնա նոր աշխույժ առած,
Ես էլ էն օրը կգրեմ «ձեռաց»։